փառաւոր զանկակներուն. նոյնպէս և Իլախ ազգի և Ըռուզ ազգի եկեղեցիք զանկակներով այրեցան. ո՛հ, թէ մեծ և գեղեցիկ զանկակներ այրեցան, զի գին չունէին։ Եւ այս եղեւ վասն չարաչար և ազգի ազգի անօրէնութեանս մերում. զի անօրէնութեանք մեր առաւել բարձրացան քան զգլուխ մեր, ըստ Դաւթայ. զի ոչ գոյ ի միջի մերում սէր և միաբանութիւն և ոչ խոնարհութիւն, ոչ ի մէջ եկեղեցականաց և ոչ ի մէջ աշխարհականաց՝ բարեգործութիւն ոչ գտանի. այլ ամբարտաւանութիւն և հպարտութիւն և ոխակալութիւն, ագահութիւն և նախանձաբեկութիւն. վասն որոյ մարդասէրն Աստուած պատուհասեաց զմեզ՝ իբրեւ զՍոդոմ և Գոմար։ Զոր նմա փառք ի յամենայնի յաղագս այսորիկ. ամէն։

1603-2. Թվ. ՌԾԱ. Վաղճանեցաւ Տէր Աբրահամ քահանայն. Աստուած ողորմի հոգուն։

1603-4. Թվ. ՌԾԲ. Վաղճանեցաւ Բանի Կուլաֆն, կենակից պարոն Միխնոյ երեսփոխանին. Աստուած ողորմի իւր հոգուն։

1603-4. Թվ. ՌԾԲ. Վաղճանեցաւ Եագուպ Պէնէշ երեսփոխան. Աստուած ողորմի իւր հոգուն։

1604. Թվ. ՌԾԳ. մայիս ԻԹ, օրն երեքշաբթի։ — Տէր Յովանէս քահանայն որդի Սիմոնի յանկարծամահ եղաւ. Աստուած ողորմի իւր հոգուն։

1604-5. Թվ. ՌԾԳ. Բան Հարպուրթ՝ որ էր վոյվոտա Բուգքի, առ Աստուած փոխեցաւ. Աստուած ողորմի իւր հոգուն։

1604-5. Թվ. ՌԾԳ. Վոյվոտայ Վոլընգքի Գնեազ՝ Օլէքսանդր քնեազ Վասիլիին որդին մեռաւ։

1604-5. Թվ. ՌԾԳ. Թուրքի խոնտիքարն սուլթան Մահմատ մեռաւ, ինն ամ թագաւորեաց և ապա և փոխանակ նորա Նստաւ որդին իւր սուլթան Ահմատ։

1604-5. Թվ. ՌԾԳ. Սեպտեմբերի Ա. Զոմն մեծ իշխան Սդանիսլաւքիյ անուն՝ խարախչիք սպանեցին, և գծառայ մի ընդ նմին, և ինքեանք փախեան և ելին յերկրէն։

1604-5. Թվին ՌԾԳ. Վաղճանեցաւ Վարդան երեցփոխան. Աստուած ողորմի իւր հոգուն։

1605-6. Թվ. ՌԾԴ. Բան Սդրուս անուն Իւրիյ՝ առ Աստուած փոխեցաւ. Աստուած ողորմի իւր հոգուն։

1605-6. Թվ. ՌԾԴ. Վաղճանեցաւ Քանցլէր Բան Եան Զամոյսքիյ, որ էր երկրորդ թագաւորին, և էր քաջ և արի պատերազմող և հմուտ կռվոյ,